Եւ Շաբաթ առաւօտուն (2 Փեբր.) ի տիւան գնաց Եղիազար վարդապետն վասն բանին Երուսաղէմայ և զհռոմի պատրիգն Ստամպօլու ընդ նմա։ Եւ վէզիրն ասէ. Ի տուն իմ եկէ՛ք. եւ ի տան անդ ասէ հռոմին թէ Առաւօտուն յերկոցունց կողման ե ե ոգի առ մեզ. եւ ելանեն ի դուրս։

Եւ զվիրան կարդայր յեկեղեցին Էսիլի թոռն եւ ասէր թէ Ով որ չընդունի զՅովանէսն առաջնորդութեան՝ այսպէս լիցի եւ այնպէս, կարդալով եւ ծանուցանելով։ Եւ մեր եկեղեցոյ չարքն խորհեալ ի մի թէ Եղիազարի և Մարտիրոսի գլխոյն է այս, և գնացեալ առ Խանճին եւ Տաւութն թէ Նոցա հախէն պիտիր գայք. եւ նոքա զերեսս իւրեանց պահեն, եւ երթան ի դուռս[1]) վէզիրին և գրեն արզուհալ մի քանի և ոչ հաւանեն, և յետոյ գրեն թէ Եկան արք ոմանք զօրպայք եւ զօտան կոխեցին զսեւազլխոյ[2]) եւ այսչափ ըստակ վերուցին եւ զսեղանն կերակրոյ ցրուեցին, զգրեանք յափշտակեցին. հրաման տո՛ւր սուպաշուն եւ հասասպաշուն՝ զի գացէ ի միջի մեր եղեալ զէշխայքն. եւ վէզիրն տայ զհրամանն թէ Շէր իլէ կեօրունսուն. եւ ամօթալից դառնան, քանզի այն ոչ մտանէր ի գիր։ Եւ առաւօտուս Սուրբ Սարգսի՝ ի Պալատ Մուղնեցին առ ժողովուրդն գանկատի թէ Ի՞նչ չար արարի ձեզ զի երեկոյիս զիս ծեծելու արին, կոխեցին զօտայս և բան ցրուեցին ի մէնջ, ի՞նչ կ՚ասէք դուք. եւ այլ բազում բանք սոյնպիսիք։ Եւ ի ժողովրդենէն մէկ քանի մարդ կանչեալ թէ Ի՞նչ գտար ի քաղաքս՝ ցից տնկեցեր, թէ չեն ուզեր չեն կամիր՝ ել գնա՛յ. եւ ոմանք սոցա արգիլումն առնեն եւ ինքն երթայ ի խուցն խոցուած։ Եւ ի չարեացն Թըլթըլն եւ Պարմախսուզն եւ Էխտիկն Ղալաթու եւ

1) դուրս. 2) զեւազլխոյ.